

ՎԱԶԳԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու

## ԱՆԴՐԱԴԱՐՁ ԹԵՈՂՈՐՈՍ ՔՈԹԵՆԱԴՈՐԻ ԵՐԿԵՐԻ ԲԱՈԱՊԱՇԱՐԻՆ

Մի բանասեր-բառագետ հեզմում էր՝  
«Քոթենադորի լեզու», – տեղեակ չէր:

1. Թէոդորոս Քոթենադորը եղել է իր ժամանակի (է. դ.) երեւելի եւ իւրօրինակ, յատուկ մտածողութեան տէր անհատ, եւ դա երեւում է նրա հոգեւոր ներհուն երկերից՝ բառաստեղծ, անձնուէր եկեղեցական, սրբասացութեան նուիրեալ:

Մեր այս աշխատանքում սեղմ վերլուծութեամբ անդրադառնում ենք Հայոց Եկեղեցու ներհուն գործչի երեք ճառի բառապաշարի, հիմնականում նորակերտ բառերին, մասամբ կատարում հնչիւնական-հնչիւնափոխական (տեղաշարժի) որոշ դիտարկումներ:

Նորակերտ ենք համարում առաջին հերթին այն բառերը, որոնք տեղ չեն գտել, օրինակ, «Նոր հայկազեան բառարանում» (ՆՀԲ), ինչպէս նաեւ, որոշ վերապահումով, այն բառերը, որոնք նոյն բառարանում բերւում են միայն այս հեղինակի որեւէ երկից առնուած վկայութեամբ<sup>1</sup>:

Նրա երկերի լեզուի քննութիւն, որքան մեզ յայտնի է, ըստ այս յատկանիշների մինչեւ օրս չի կատարուել, եղել են, իհարկէ, բառարանային մասնակի բառաքաղումներ, բնագրային ինչ-ինչ գնահատումներ: Քոթենադորի երկերի բառապաշարն այսօր իր սպասելի տեղն ունի հայոց լեզուի պատմութեան մէջ:

Հայ մատենագրութեանը յայտնի այս հեղինակի մասին կան բաւականին սուղ տեղեկութիւններ, այն, որ պիտի ծնուած լինի 7-րդ դ. սկզբներին, եղբօրորդին է Կոմիտաս կաթողիկոսի (615–628 թթ.), քրոջորդին՝ Եզր կաթողիկոսի (630–641 թթ.): Ժամանակին պատշաճ կրթութիւն ստանալուց յետոյ նա եղել է Արազածոտնի Ս. Աստուածածին վանքի վանահայրը, կրթել ապագայ կաթողիկոսներ Սահակ Զորոփորեցուն

<sup>1</sup> Հարցի նման լուծումը, ըստ յարաբերական ժամանակագրութեան, դասական բանասիրութեան մէջ արդէն ունի իր աւանդոյթը, ուստի այս ոլորտում այն մնում է միակ ընդունելին:

(677–703 թթ.), Յովհան Օձնեցուն (717–728 թթ.)<sup>2</sup>։ Յիրաւի յիշելի անուն. նա իր լուծման ունի հայոց հոգեւոր կեանքում, նաեւ մեր լեզուի բուն պատմութեան առումով։

2. Քռթենաւորի բառապաշարը գրեթէ անասելի ձեւով հարուստ է, նաեւ հոգեւոր եւ իմացական ոլորտում իւրօրինակ՝ հիմքում ընկած երեւոյթի վերաբերեալ անսպասելի անուանում-բառերի ստեղծմամբ<sup>3</sup>։

Նրա լեզուի ամենացայտուն առանձնայատկութիւնը, թերեւս, բառապաշարի այն շերտն է, որն իր ժամանակի առումով նոր է, ունի հեղինակային ոճի զգալի իւրօրինակութիւններ, նկատելի է նոր բառերի նկատմամբ ակնյայտ հակում. օրինակ՝ «Որք կաթարոս արտաքուստ երեւին դուաւենին զգեստաւք, եւ խաշակիր մարմնակրութեամբ, եւ ներկերպին զազանադէմք, խրթնազգեստք, խունապողք, տգիտախողխողք, քծնաբանք, զաղտապատիրք, գողտաբարբառք, ապաժուժախորհք, դժապանք» (Թէոդ. ընդ., էջ 1243). այստեղ ընդգծուածներից մի քանիսը նշձ-ն չունի (զաղտնապատիր, խունապող, ներկեպել), իսկ մի քանիսը բերում է միայն այս նախադասութիւն-օրինակի վկայակոչմամբ (ապաժուժախոհ, գողտաբարբառ, դժապան, խրթնազեստ, մարմնակրութիւն, տգիտախողխող, քծնաբան), իսկ կաթարոս(ք) եւ դուաւենի բառերից առաջինը, որ փոխառութիւն է (հուն. καθάρως, լատ. catharus «մաքուր, հստակ»), հին է, թէեւ բառարանն ունի վկայութիւն նաեւ այս հատուածը, երկրորդի «ոչխարենի, արջառենի» իմաստի նշումը բառարանում յուշում է, որ բառի ճիշտ ձեւը պիտի լինի տուաւենի (<տուաւ «արջառ, խաշն»), որ հանդիպում է նախ այս հատուածում, այնուհետեւ Արծրունու երկում (իմա՛ հնչիւնական դ / տ տարբերակում)։

Մէկ այլ օրինակ. «Այսար վերահայեաց տեսակ (ձեռ. տարբ.՝ տեսակք վարսագեղեալք), զուարթածաղիկ (ձեռ. տարբ.՝ զուարթեւանգք ծաղկօք) եւ երփնագանգեղ (ձեռ. տարբ.՝ երփնագունագարդ) գարունն, սաղարթանեմափրիք բուսով վայելչացեալք (ձեռ. տարբ.՝ վայելչաւորեալք)՝ զալստեամբ որդույն Աստուծոյ» (Թէոդ. գով., էջ 1260). քննական բնագրում եւ ձեռագրական տարբերություններում ընդգծվածները նշձ-ն՝ 1) չունի (երփնագունագարդ, զուարթեւանգ, վայելչաւորեալ [ $<$  \*վայելչաւորիմ

<sup>2</sup> Տե՛ս Յ. Քէճոսեան, Թէոդորոս Քռթենաւորը եւ իր ճառերը // «Մատենագիրք հայոց», հտ. Ե. (Է. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1241։

<sup>3</sup> Նշձ-ի հեղինակները գտնում են, որ Քռթենաւորի երկերի նկատմամբ եղել է յետագայ «անգրագէտ» միջամտութիւն, որպիսով դրանց «հելլենաբան վսեմ» ոճը դարձել է «առաւել խրթին», «ոչ ազատ գրիչների սխալներից»։

«վայելուչ դարձնել. պատշաճաւորել», սա եւս ՆՀԲ-ն չունի]), 2) ունի միայն այս երկի վկայութեամբ (երփնագանագեղ, սաղարթանեմափթիթ), 3) արձանագրում է միայն այլ հեղինակի երկի վկայակոչումով՝ վարսագեղեալ (Վրդ. սղ. = [Մեծին Վարդանայ վարդապետի (?) Մեկնութիւն Սաղմոսի]), 4) բերում է նախ՝ այս երկի, այնուհետեւ այլ (յետագայ) հեղինակի վկայակոչումով՝ վերահայեաց (ած.). Լմբ. պտրգ. [= Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Հնդարձակ մեկնութիւն խորհրդոյ սուրբ պատարագին. ԺԲ. դ.] (< վերահայիմ «վերեւ նայել». Զբր. կթ. խչ. [= Զաքարիա կաթողիկոսի «Ճառք ի վերայ տօնից». Հ. դար]): Այսպիսով՝ երկորորդ օրինակի նման վերլուծութիւնը ինքնին ցոյց է տալիս, թէ հայ հին գրական իւրաքանչիւր յուշարձանի բառապաշարի ամէն մի միաւոր ինչպիսի մանրամասն քննութիւն է ենթադրում՝ որպէս լեզուի ընդհանուր բառապաշարի պատմութեան փաստ:

3. Այդ երկերն են՝ «Ճառ ընդդէմ Մայրագոմացւոյն» (=Թէոդ. ընդ.), «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» (=Թէոդ. խչ.) եւ «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» (=Թէոդ. գով.), որոնք յետագայում տպագրուած են «Յովհաննու իմաստասիրի Աւանգեւոյ Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1833, 2-րդ տպ. 1953, ալիգատ՝ էջ 145–182 կամ 169–210) գրքում, իսկ վերջին ժամանակներս՝ «Մատենագիրք հայոց» (Ե. հտ., է. դ., Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1239–1269) ժողովածուի մէջ<sup>4</sup>:

Մի կարեւոր դիտարկում է այն, որ Քռթենաւորը լաւագոյնս ծանօթ է առանձնապէս Ագաթանգեղոսի Պատմութեանը: Դա երեւում է ՆՀԲ-ում բերուող բառերի հեղինակային վկայութիւնից. այդ բառարանում կան բառայօգուածներ, որոնց համար վկայակոչում են միայն երկուսը, նախ՝ Ագաթանգեղոսը, այնուհետեւ՝ Թէոդորոս Քռթենաւորը. հմմտ. աստուածակայ (ած.) «որ ինչ իցէ իբրեւ կայք կամ բնակարան աստուծոյ» (Թէոդ. խչ., էջ 1257). այս օրինակում առաջին դէպքում այն գործածւում է իբրեւ կայան բառի որոշիչ լրացում (իմա՛ աստուածակայ կայանս), իսկ Քռթենաւորի երկում՝ կեանք բառի (իմա՛ աստուածակայ կեանք). մեմֆալետալ (ըստ ՆՀԲ-ի՝ մեմֆալետալ «որ է ըստ կերպի մերում») (Թէոդ. գով., էջ 1267), պարկեշտասէր «պարկեշտութիւն սիրող» (Թէոդ. գով., էջ 1267, 1268) եւ այլն: Այնուհետեւ ՆՀԲ-ն ունի միայն Ագաթ.-ի անունով վկայաբերուած, սակայն բառը գտնում ենք նաեւ Քռթենաւորի երկերում (որ ՆՀԲ-ն չի

<sup>4</sup> Առաջին ճառը «Մատենագիրք հայոց»-ում ունի «Երանելոյն Թէոդորոսի Հնդդէմ Մայրագոմացւոյն» վերնագիրը:

բերում), օր.՝ պատկերասէր «սիրող զպատկերս դից. այսինքն՝ զկուռս» (իմա՝ «կուպաշտ»): Բառագիտական նման դիտարկումը, կարծում ենք, արգասաւոր է ամէն մի լեզուի, ընդ որում՝ հայերէնի ընդհանուր բառապաշարի պատմութեան տեսանկիւնից:

Հազիւ թէ կարելի լինի համաձայնել ՆՀԲ-ի այն դիտարկմանը, թէ Քոթենաւորի երկերին (լեզուի բառապաշարի առումով) միջամտութիւն են ունեցել այլ հեղինակներ, ինչպէս նշում է, օրինակ, հրապարակաւ շաղկապեալ Վառդապետի անունը («Եթէ չիցէ յաւելուած իմաստակի ումեմն Թադէոս վարդապետի անունը է եւ ճառ համբարձման՝ խոկեալ այսպիսի բառիւք, զորովք զանց առնեմք ի կարգի բառարանիս». տէն ՆՀԲ, հ. 2, էջ 130, սիւնակ 2): Այդպէս նաեւ հմտ. աւետարանականաւանդ «ըստ Ավետարանի» (Թէոդ. ընդ., էջ 1243). երկնաճառակաւ (տարբերք) «երկնային ոյրորտով ներփակ» (Թէոդ. զով., էջ 1261), վերագագաքնակատարանեմ (կոհակ) «ամենավերին մասով կիսուած» (ն. տ.) եւ այլն:

Քոթենաւորի բառապաշարում տեղ են գտել բառեր, որոնք հասկանալի կամ բացատրելի կարող են լինել միայն բարբառային կամ խօսակցական հնարաւոր տարբերակների օգնութեամբ (նման հիմքով): Այսպէս, հանդիպում է անխանաթ բառը, որ չի բերւում ՆՀԲ-ում. «Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ, գերադրական եւ իմանալի տնկագործութեանն խորհրդոյն ապաստվթ, խորութիւն եւ անխանաթ քառաթեւ սուրբ նշան» (Թէոդ. խչ., էջ 1252)<sup>5</sup>. մենք ենթադրաբար առանձնացնում ենք ան- ժխտական մասնիկը եւ խանաթ-ը դիտում բարբառներում գոյութիւն ունեցող խանաթ-ի տարբերակ (իմա՛ւ ա // ա), որ պիտի նշանակի «երկմասն՝ երկեակ». բառը, ի դէպ, հայերէնում ստուգաբանուած չէ, ըստ ՆՀԲ-ի՝ նշանակում է «հետք. ճանապարհ ցամաքի. փոյթ», որ կարելի է իմաստաբանօրէն առնչել «մաս, ճիւղ. կողմ» ընդհանուր իմաստին, այնինչ բերուած բնագրում խօսքը վերաբերում է «աներկճիւղ, միագիծ քառամասն» դաւանութեանը: Իսկ այս եւ նման օրինակները նշանակում են, որ մեր այս իւրօրինակ բառաստեղծ հեղինակի, իրօք, «վսեմ եւ հելլենաբան», «վսեմական» լեզուն ունի ամենալայն իմաստաբանութեամբ եւ բառագործածութեամբ քննութեան առնելու կարիք:

<sup>5</sup> Խանաթ-ը, ենթադրելի է, խանաթ «հետք, ճանապարհ» (թերեւս՝ «կողմ, թեւ») բառի երկբարբառային տարբերակը լինի [հմտ. հայ. (բրբռ.) խանադ «փեղկ. երկու կես. թեւ» (< իրան.) (?)]:

Այդուհանդերձ՝ լեզուական իրողությունը, եթէ նոյնիսկ որակենք իբրեւ բառի դիպուածային գործածություն (դիպուածաբանութիւն. *франс. occasionnel «դիպուածով, պատահական»*), մնում է քննութեան ոլորտում (ուժի մէջ)՝ իբրեւ լեզուի ընդհանուր բառապաշարի պատմութեան տարր: Նման բառերը քաղում ենք ըստ հեղինակի յիշեալ երկերի հետեւեալ հրատարակությունների<sup>6</sup>.

1. Հնչիւնական դիտարկումներ: Դրանք վերաբերում են հիմնականում բաղաձայնների, մասամբ ձայնաւորների (ձայնորդների) գրական կանոնից դուրս դրսեւորումներին (օր.՝ խուլ բաղաձայնի ձայնեղացում եւ այլն), որ նկատում ենք նաեւ նախորդ գրական յուշարձաններում՝ իբրեւ ոչ գրական, խօսակցական իրողություն:

1. Զայնատրների (ձայնորդների) վերաբերեալ. գեղադէպադիտակ «գեղեցիկ եւ հասակով բարձր» (Թէոդ. ընդ., էջ 1244, *փխ. ու*), գեղեղեշարմատն «գեղեցկօրէն բարձրացող արմատ՝ հիմք» (*ն. տ.*, էջ 1267, *փխ. ու*), երկնիդ «կիսուած» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. իւ*), ընծիդել «վերածել» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. իւ*), խաւսափեմ «խոյս տալ» (Թէոդ. ընդ., էջ 1244, *փխ. ու*), կաղակարծելի «կեղծ» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. ե*) կայնառ «կաճառ» (Թէոդ. գով., էջ 1257. *փխ. առանց յի*)<sup>7</sup>, յաւտադիւղաջեալ «միշտ զողանջած. մշտաձայն» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. ո, նաեւ ն*), վսամաբանութիւն «վերին խօսք» (Թէոդ. ընդ., էջ 1248, *փխ. ե*), վսամական «վսեմ. սքանչելի» (Թէոդ. խչ., էջ 1248, *նաեւ 1250, փխ. ե*), վսամարփի «վսեմավառ. արեւաշող» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. ե*) եւ այլն:

2. Բաղաձայնների վերաբերեալ. դժապան(բ) «դժնի ասուած» (Թէոդ. ընդ., էջ 1243. *փխ. բ*)<sup>8</sup>, դուարենի «անասնի մորթիով» (Թէոդ. ընդ., էջ 1243, *փխ. տ*), ընծիդել «վերածել» (Թէոդ. խչ., էջ 1253, *փխ. ձ*), հնծան «խաղող ճմուռելու տեղ» (Թէոդ. գով., էջ 1266, *փխ. ձ*), հնծանաշէն «իբրեւ հնձան՝

<sup>6</sup> Տէս «Երանելոյն Թէոդորոսի Ընդդէմ Մայրագոմացոյն // «Մատենագիրք հայոց», հ. Ե. (է. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1243–1249 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աւանցոյ Մատենագրութիւն», Վենետիկ, 1833, էջ 147–158, 2-րդ տպ., Վենետիկ, 1953, էջ 171–183). «Նորին երանելոյն Թէոդորոսի ճգնաւոր միայնակեցի եւ վարդապետի Ներբողեան ի Սուրբ խաչն աստուածընկալ եւ տնօրինութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի» // «Մատենագիրք հայոց», էջ 1250–1257 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աւանցոյ Մատենագրութիւն», էջ 159–171, կամ էջ 184–198). «Երանելոյն Թէոդորոսի Միայնակեցի Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ միշտ կոյս Մարիամ // «Մատենագիրք հայոց», էջ 1258–1269 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աւանցոյ Մատենագրութիւն», էջ 172–182, կամ էջ 199–210):

<sup>7</sup> ՆՀԲ-ն դնում է՝ «տե՛ս կաճառ», առանց օրինակի:

<sup>8</sup> ՆՀԲ-ն՝ բ-ով, բերած այս օրինակը:

ամբարելի տեղ, կառուցուած» (Թէոդ. գով., էջ 1266, փխ. ձ), յոֆնաբուսական «խիտ աճած» (Թէոդ. ընդ., էջ 1244, փխ. գ), յոֆնուստ «վաղուց եւեթ, վաղուց» (ն. տ., էջ 1255, փխ. գ)<sup>9</sup>, վախճան «աւարտ» (Թէոդ. ընդ., էջ 1248, փխ. ճ), վանգիւմ «վանկերով» (Թէոդ. գով., էջ 1258, փխ. կ), տնգովֆն «այն տունկերով» (Թէոդ. ընդ., էջ 1244, փխ. կ), տժգոյն «անգոյն» (Թէոդ. ընդ., էջ 1246, փխ. դ), փոյտ «փոյթ» (Թէոդ. ընդ., էջ 1244, փխ. թ) եւ այլն: Բաղաձայնների նման տեղաշարժը (առանձնապէս՝ ձայնեղների խլացում, եւ հակառակը) փաստ է այն բանի, որ Քոթենաւորը պիտի եղած լինի նման տեղաշարժ ունեցող բարբառի ներկայացուցիչ (դեռեւս 7-րդ դարում), որ անվարան փաստ է հայ բարբառների պատմութեան համար:

II. Բառապաշարի փնտրութիւն: Այս դէպքում քննութիւնը կատարում ենք ըստ բառարանագրական տուեալների համեմատութեան, այսինքն՝ ՆՀԲ-ի ունեցածի հետ համեմատած այս հեղինակի երկերում գործածուած բառային միաւորները ինչպիսի ժամանակային բաշխման մէջ են, եւ առհասարակ՝ հայ հին գրական յուշարձանների առընչութեամբ:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել տարբեր խմբեր:

1. Բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում. դրանք այստեղ բերում ենք ըստ իրենց խօսքիմասային պատկանելութեան, մի քանիսը՝ բնագրային օրինակներով, իսկ միւսները՝ թուարկումով (կից փակագծում՝ բնագրի եւ էջի նշումով):

ա) Գոյականներ. դրանք քանակապէս աւելին չեն, քան ածականները, հանդիսանում են երկբաղադրիչ, մասամբ եռաբաղադրիչ կազմութիւններ. «Այսաւր նորափետուր հրաշիւք գեղեցկազարդեալք ի հնարագործութենէն գալստեամբ որդւոյն Աստուծոյ» (Թէոդ. գով., էջ 1260). «Եւ ռահ գործեալ ի նմա ի ձեռն լուսածին գերապանծ նիշփայտ» (Թէոդ. խչ., էջ 1251) եւ այլն:

Այդպէս նաեւ հետեւեալները. առաջնորդմանութիւն «մինչ այդ՝ նախկինում թարգմանուածը» (Թէոդ. ընդ., էջ 1243), արուեստահնարագործութիւն «վարժ ձեւով գործելը» (Թէոդ. գով., էջ 1258), գեղեղեշարմատն «գեղեցկօրէն բարձրացող արմատ՝ հիմք» (ն. տ., էջ 1267), համբարական «զաւակատուն» (Թէոդ. ընդ., էջ 1244), հնարագործութիւն «մի հնարով՝ ձեւով գործելը» (Թէոդ. գով., էջ 1260), շարայարելութիւն «շարադրելը» (Թէոդ. խչ., էջ 1251), շարամերձութիւն «չարին՝ չարիքին մօտ լինելը» (ն. տ., էջ 1254), վայրաբերականութիւն «ցած՝ ներքեւ թափուելը» (ն. տ., էջ 1254), տարապականութիւն «ամբողջովին ապականուելը. ամէն կողմի վերաբերելը» (ն. տ., էջ 1251, նաեւ 1256):

<sup>9</sup> ՆՀԲ-ն՝ գ-ով, բերած այս օրինակը:

բ) Ածականներ. սրանք նախորդի համեմատութեամբ բաւականին շատ են, եւ դա բնական է՝ կապուած երեւոյթի յատկանշման հետ. ամալաւայել (Թէոդ. ընդ., էջ 1244), անսկզբնագոյ «անսկիզբ» (Թէոդ. ընդ., էջ 1244), առասնակայ «սանձեալ» (Թէոդ. խշ., էջ 1252), աւետարանակաւնաւանդ «ըստ Աւետարանի» (Թէոդ. ընդ., էջ 1243), բեւեկնակայծակ «փայլ՝ ճայթիւնով» (ն. տ., էջ 1253), գաղտապատիր «ծածկաբան» (Թէոդ. ընդ., էջ 1243), գայիսոնական «գերակայ» (Թէոդ. խշ., էջ 1255), գերարկեալ «չափից աւելի» (Թէոդ. խշ., էջ 1254), դիւրապետական «դիւրին կառավարելի» (ն. տ., էջ 1250), երկնագուշակ «երկնային» (Թէոդ. ընդ., էջ 1248), երկնահոլովակառու «երկնքում պտոյտ գործող» (Թէոդ. գով., էջ 1261), զանազանափոփ «տարատեսակ ծաղկուն» (Թէոդ. գով., էջ 1265), իմաստաբեր «իմաստալից. խոհեմ» (ն. տ., էջ 1268), խաբողորսակ «ծուղակ լարող» (Թէոդ. ընդ., էջ 1247), կերպատեսակ «զանազան. այլազան» (Թէոդ. խշ., էջ 1251), համակի «ամբողջովին» (Թէոդ. գով., էջ 1267), հարաբուն «հիմնաւոր» (Թէոդ. խշ., էջ 1250), հիւսնաշափառագոյն «աննկարագրելի փառապանծ» (ն. տ., էջ 1255), հոգետրաբուլխ «հոգետր թաթախումով» (Թէոդ. գով., էջ 1268), հոգէնկար «հոգետր» (ն. տ., էջ 1266), հոգիաներկ «հոգելից» (Թէոդ. խշ., էջ 1250, նաեւ 1255), հովտածիծաղասաղարթ «թարմ՝ զուարթուն աճած» (Թէոդ. գով., էջ 1268), հրաշ առ հրաշ «հրաշալի» (Թէոդ. խշ., էջ 1257), նահողասաց «պատշաճ՝ ի դէպ ասուած» (ն. տ., էջ 1250), նանապարհընթաց «մեկնողական. երթեւեկ» (ն. տ., էջ 1254), մահադարձ «մահալի» (Թէոդ. ընդ., էջ 1244), մերառեցեալ (մերառեալ) «մերը իրեն առած» (Թէոդ. ընդ., էջ 1249), մերատոհմ «մերազնեայ. ցեղակից» (Թէոդ. խշ., էջ 1252)<sup>10</sup>, միշտխողովեան «մշտամահ եղած՝ խողողեալ» (Թէոդ. գով., էջ 1260), յաւետապարգեւ «մշտագով» (Թէոդ. խշ., էջ 1254), յաւեժառատ «մշտաբուխ» (ն. տ., էջ 1253), յոքնաբուսական «առատաճուն» (Թէոդ. ընդ., էջ 1244), ուղեշարձակ «ճիւղառատ» (Թէոդ. գով., էջ 1267), վայելչափառ «պատշաճող փառքով» (Թէոդ. գով., էջ 1265), տիպատեսակ «տեսակ՝ ըստ տիպի՝ ձեւի» (Թէոդ. խշ., էջ 1250), փայլածիւն «փայլուն. փայլ տուող» (Թէոդ. գով., էջ 1261), փառանալի «չորսի վերածուող» (Թէոդ. խշ., էջ 1254) եւ այլն:

գ) Բայեր. սրանք նոյնպէս զգալի թիւ են կազմում, իւրօրինակ իրողութիւնների գործառութեամբ՝ շարժման մէջ: Օրինակ՝ «Յորմէ սարսուեցեալ վրդովէին ամենայն բանականացն սեռք եւ հրճումայր տիրակարծ

<sup>10</sup> ՆՀԲ-ն չունի այս բառը, թեեւ ունի մերատոհմակ (տե՛ս ստորեւ):

իշխանն մահուն» (Թէոդ. ընդ., էջ 1244). «այլ ճաշակմանն մահածութեամբ միայն հրեմուանայր սխալանացն սաղրիչ» (ն. տ., էջ 1245): «Վերայայտեաց արս արդարս, առաքեաց մարգարէս աստուածաքարոզս, սակամեաց զապարասանսն» (Թէոդ. ընդ., էջ 1244):

Այսպէս նաեւ հետեւեալները (մի քանի տասնեակից աւելի). անձեռնել (< անձեռեալ) «ընձեռել» (Թէոդ. ընդ., էջ 1244), առբնանալ «հիմնաւորուել» (ն. տ., էջ 1244, նաեւ 1247), արտաշարեալ «արտայայտուած» (Թէոդ. իւշ., էջ 1252), բարեդրուատելի «բարի դրուատանքի արժանի» (Թէոդ. ընդ., էջ 1247), եռաբերել «երիցս ուրախանալ» (Թէոդ. գով., էջ 1261), իրակեալ «իրացնել» (Թէոդ. իւշ., էջ 1250), հոմանմանեալ «նոյնպիսին եղած, համանման» (Թէոդ. գով., էջ 1259), մերառնուլ (< մերառեցեալ) «մեր մեղքերն իր վրայ առած» (Թէոդ. ընդ., էջ 1246, նաեւ 1249), յաւտաղիւղաջեալ «միշտ ղողանջած. մշտաձայն» (Թէոդ. իւշ., էջ 1253), յուսանկեալ «յոյսով եղած» (ն. տ., էջ 1244), շառաւեղագործեմ (< շառաւեղագործեալ) «ճիւղաւորուել» (Թէոդ. գով., էջ 1267), պատուհասակրել «վտանգի հանդիպել» (Թէոդ. ընդ., էջ 1243), պատուհասառնում (< պատուհասառող) «պատուհասուել» (ն. տ., էջ 1244), սականել (< սականեաց. սակ «մաս») «առանձնանալ» (Թէոդ. ընդ., էջ 1244), ստուերամածեալ «մթնել. խաւարել» (Թէոդ. իւշ., էջ 1251), վայրանցեալ «անցնել» (ն. տ., էջ 1252), վարայայտնեալ «յայտնուել» (Թէոդ. գով., էջ 1261), վարդագեղեալ «վարդի նման գեղեցկանալ» (ն. տ., էջ 1268), վերագեղեալ «վերստին գեղեցկանալ» (ն. տ., էջ 1261), վերտանեմ (< վերտարեալ) «բարձրացնել» (Թէոդ. իւշ., էջ 1250), տրամոռոգանեմ «լայնօրէն ոռոգել» (Թէոդ. գով., էջ 1260) եւ այլն:

դ) Մակրայներ. առգիտաբար «գիտակցօրէն» (Թէոդ. իւշ., էջ 1251), տղաբար «տողացի. տող առ տող. բաժանելի (?)» (Թէոդ. իւշ., էջ 1251)<sup>11</sup>:

2. Բառեր, որոնք նձԲ-ում բերում են միայն Քոթենաւորի անունով: Դրանք արտացոլում են տուեալ ժամանակը, ըստ այդմ՝ հեղինակի լեզուամտածողութիւնը՝ ընդհանուր եկեղեցական-դաւանականի մէջ: Բերում ենք ըստ իրենց խօսքիմասային պատկանելութեան (250-ից աւելի): Սակայն պէտք է նկատել, որ որոշ ածականներ մտածուում են նաեւ իբրեւ մակբայ՝ պայմանաւորուած բնագրի տուեալ հատուածում ունեցած գործածութեամբ, հմմտ. անյեղաւրէն («անյեղ, անյեղի»)». «Քանզի անյեղաւրէն եւ անքատակ է աստուածահրաշ ներանձանաւոր» (Թէոդ. իւշ., էջ 1251), տաւածասփիւռ («լայնածաւալ»). «եւ ի հեթանոսս

<sup>11</sup> Հմմտ. անտղաբար (տե՛ս ստորեւ):

շառաւեղագործեալ համաբոլոր տարածասփիտ ներծաւալեցաւ» (Թէոդ. գով., էջ 1267) եւ այլն:

ա) Գոյականներ. աղամածնութիւն «Աղամից ծնուածները» (Թէոդ. գով., էջ 1260), ածանցականութիւն «առաջ բերելը. առաջացում» (Թէոդ. խչ., էջ 1254), ահաբռնութիւն «վախից՝ սարսափից քրտնելը» (Թէոդ. ընդ., էջ 1248), աղաթակայութիւն «աղօթքի կանգնելը. աղօթք անելը» (ն. տ., էջ 1243), ապաստվք «ապացոյց. տարացոյց, օրինակ» (Թէոդ. խչ., էջ 1252, նաեւ 1257)<sup>12</sup>, աղուղակ «լողակ» (Թէոդ. գով., էջ 1261), առատացաւրֆ «առատ հոսելը» (Թէոդ. գով., էջ 1265), առբերութիւն «բարձրացած լինելը» (Թէոդ. խչ., էջ 1250), արձանապաշտութիւն «կռապաշտութիւն» (Թէոդ. գով., էջ 1262), բաժամաւորութիւն «վարանում. երկմտութիւն» (Թէոդ. խչ., էջ 1251), բուծկութիւն «բժշկութիւն. ազատութիւն» (ն. տ., էջ 1251), գոյեղութիւն «եղելութիւն. ծնունդ» (Թէոդ. ընդ., էջ 1246), եռաթուեան «եռաթիւ. երեքանձնեայ» (Թէոդ. խչ., էջ 1257), երգասողութիւն «երգով օրհնելը՝ օրհնաբանութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1249), թմբկահարութիւն «թմբուկ խփելը» (Թէոդ. գով., էջ 1269), ինքնատիրութիւն «ինքնուրոյն լինելը» (Թէոդ. ընդ., էջ 1245), կիսամասնութիւն «կիսակատար լինելը, թերութիւն» (ն. տ., էջ 1248), կիսափրկումն «կիսատ փրկելը. անկատար լինելը» (ն. տ., էջ 1243), կոշատութիւն «կոշումն. ձայն» (ն. տ., էջ 1245), համբարան «զաւակատուն» (Թէոդ. խչ., էջ 1254), հաշանֆ «հիւծուելը. տկարութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1246). հարցագիտութիւն «հարցում իմանալու համար» (Թէոդ. ընդ., էջ 1245), հնապատում «հին բաներ պատմելը. հին պատմութիւն» (ն. տ., էջ 1247), հողաստեղծեալ «հողածին (մարդը՝ Ադամ)» (Թէոդ. գով., էջ 1260), հրալուսանանանշադեղնութիւն «լուսապայծառութիւն» (ն. տ., էջ 1259)<sup>13</sup>, հրեռուսիւրութիւն «խայտալը. հրճուանք» (ն. տ., էջ 1259), հառագրութիւն «ճառ» (Թէոդ. ընդ., էջ 1245), մահաժառանգութիւն «մահի արժանի լինելը» (ն. տ., էջ 1245), մասնառութիւն «մի մաս առնելը» (ն. տ., էջ 1243), մարմնակրութիւն «ճգնաւորութիւն» (ն. տ., էջ 1243), պարախնդութիւն «ցնծալից պարի ուրախութիւն» (Թէոդ. գով., էջ 1260),

<sup>12</sup> Հմմտ. ըստ ՆՀԲ-ի՝ հուն. ἀπόδειξις «ցուցադրում. շարադրանք», լատ. demonstratio «ցուցադրում, ի ցոյց դնելը. ապացոյց. հանդիսաւոր խօսք՝ ճառ», specimen «փորձ. նմուշ, օրինակ»:

<sup>13</sup> Ըստ ՆՀԲ-ի՝ «Բառ անպէտ բառաբարդ. որպէս լուսապայծառութիւն»: Այլեւ (փակագծում)՝ «Եթէ չիցէ յաւելուած իմաստակի ումեմն Թադէոս վարդապետի, որոյ է եւ ճառ համբարձման՝ խոկեալ այսպիսի բառիւք, որովք զանց առնեմք ի կարգի բառարանիս», որ կարօտ է բանասիրական առանձին քննութեան:

պիտատուրութիւն «հարկաւորի կարիք ունենալը» (Թէոդ. ընդ., էջ 1245), ջահագործութիւն «պայծառութիւն» (Թէոդ. գով., էջ 1260), սկզբնեղութիւն «գոյացում. ծնունդ» (Թէոդ. ընդ., էջ 1247), ստուերաբանութիւն «փսփսոց. կեղծաւորութիւն» (ն. տ., էջ 1247), վայելչակազմութիւն «վայելուչ՝ վայելչակազմ լինելը» (Թէոդ. գով., էջ 1258), վարսագեղութիւն «գեղեցիկ մազեր ունենալը» (Թէոդ. գով., էջ 1267), վերնաբաղաձայն «վերին՝ հոգեւոր մայրաքաղաք. Երուսաղէմ» (Թէոդ. խչ., էջ 1257), վսամաբանութիւն «գոժեստ. պերճախօսութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1248)<sup>14</sup>, վսամարփի «գերարփի» (Թէոդ. խչ., էջ 1253), վրդով «աղմուկ. վրդովմունք» (Թէոդ. խչ., էջ 1253), տարատողումն «կարգից հեռացում. օտարանալը» (ն. տ., էջ 1251), տնօրինակութիւն «տնօրինման յանձնառութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1243), փաղփ(f) (< փաղփեւ) «փայլփլուն լինելը» (Թէոդ. գով., էջ 1267)<sup>15</sup>, փորձագործութիւն «փորձ. Տիրոջ փորձեալ իմացութիւն» (ն. տ., էջ 1245), փորձարկութիւն «փորձութիւն» (ն. տ., էջ 1245):

բ) Ածականներ. ակումբահոյլ «համագումար» (Թէոդ. խչ., էջ 1255)<sup>16</sup>, աղանդաբեր «աղանդակից. աղանդ տարածող» (Թէոդ. ընդ., էջ 1243), աղխափակեալ «ամուր փակուած» (Թէոդ. խչ., էջ 1252), ամենակարատ «խիստ կարիքաւոր» (ն. տ., էջ 1256), անարատունի, «անբիծ, կուսական» (Թէոդ. գով., էջ 1265), աներկիւղական «աներկիւղ. անահ» (Թէոդ. խչ., էջ 1250), անգրաղասէր «կուսութեանը՝ անբիծ լինելուն հակուած» (Թէոդ. գով., էջ 1267), անգինահար «առանց զէնքի վնասուած» (Թէոդ. ընդ., էջ 1247), անձնահանձար «ինքնամտած. մտացածին» (ն. տ., էջ 1243, նաեւ 1246), անշիջատոյն «անշէջ տոչորուած» (ն. տ., էջ 1248), անպարագրական «անպարագիր՝ անսահման» (ն. տ., էջ 1244, նաեւ 1254), անպարատեղի «անվայրափակ. տարածուած» (ն. տ., էջ 1244), անսակ/անսակի «անսահման. անօրինակ» (Թէոդ. խչ., էջ 1250), անսարսափելի «աներկիւղ» (Թէոդ. ընդ., էջ 1243), անտաշագործ «անմշակ» (Թէոդ. գով., էջ 1268), անտարաւ «անպարոյր» (Թէոդ. ընդ., էջ 1249), ապաժուծախոն «չարամտած. արեան ծարաւի» (ն. տ., էջ 1243), առաջատարփի «առաջին ցանկացող (Եւա)» (ն. տ., էջ 1244), առաքելագունդ «առաքեալների խումբ» (Թէոդ. գով., էջ 1266), աստուածահանձար «աստուածիմաստ. խելամիտ» (ն. տ., էջ 1268), աստուածաբարոզ «Աստծուն՝ աստուածայինի քարոզող» (Թէոդ.

<sup>14</sup> Բնագրում՝ ա-ով:

<sup>15</sup> ՆՀԲ-ն բերում է իւմ-ով:

<sup>16</sup> ՆՀԲ-ն ունի ակմբահոյլ ձեւով, նշելով՝ «գրեալ էր ակումբահոյլ»:

ընդ., էջ 1244), արդարագիտող «ուղղամիտ» (ն. տ., էջ 1244), արդարածեր «արդար ծերունի՝ ծերացեալ» (ն. տ., էջ 1248), արդարահրահանգ «բարի. աստուածահաճոյ» (ն. տ., էջ 1243), արդարընկալ «արդարութեամբ ընդունելի» (ն. տ., էջ 1245), արեալիառ «լուսափայլ» (Թէոդ. խչ., էջ 1253), արեւելաբոյս «(դրախտի) արեւելեան մասում բուսած» (Թէոդ. խչ., էջ 1251), արեւելածագ «արեւելեան» (Թէոդ. գով., էջ 1268), արեւելանշան «արեւելքից երեւացող» (Թէոդ. խչ., էջ 1256), արտասանմանահալած «վտարանդի» (Թէոդ. գով., էջ 1262), արփիակիզն «արեւակէզ. լուսացայտ» (Թէոդ. խչ., էջ 1253), արփիահրատ «արեւավառ» (ն. տ., էջ 1250), աւետարանատունկ «աւետարանով հաստատուած» (Թէոդ. գով., էջ 1260), բազմադասեալ «հերթակարգուած» (Թէոդ. խչ., էջ 1250), բազմայեղանակաբուն «ծագմամբ բազմապիսի. մեծաբոյս» (Թէոդ. գով., էջ 1267), բազմերանաւտ «երջանկաւէտ» (Թէոդ. գով., էջ 1266), բանայեղ «խօսքառատ. ներբողով լեցուն» (ն. տ., էջ 1264), բարեգոյակ «ի բնէ բարի» (Թէոդ. ընդ., էջ 1245), բարեգուարն «զուարճալի. բերկրական» (ն. տ., էջ 1267), բարձրատեսակ «բարձր ձեւով. պանծալի» (Թէոդ. գով., էջ 1264, 1265), բեղմնաբեր «արգասաբեր. պտղաբեր» (Թէոդ. ընդ., էջ 1243), բոլորահովիտ «համատարած հովիտ յիշեցնող» (Թէոդ. գով., էջ 1266), բոլորամիտ «ողջամիտ» (ն. տ., էջ 1268), բուսածին «բուսաբեր» (Թէոդ. խչ., էջ 1254), գազանաղէմ «գազանակերպ» (Թէոդ. ընդ., էջ 1243), գեղաղէշաղիտակ «դիտարժան. գեղատեսիլ» (ն. տ., էջ 1244), գողտրաբարբառ «քաղցրալեզու» (ն. տ., էջ 1243), գումարտական «համախումբ» (Թէոդ. խչ., էջ 1255), գունագանագեղ «գունագեղ. երփնեւորանգ» (Թէոդ. գով., էջ 1268), գրկընկալ «գրկի՝ գրկանոց (երեխա)» (Թէոդ. ընդ., էջ 1247), դասախումբ «դասդասուած» (Թէոդ. խչ., էջ 1255), դառնապարհակ «խիստ տաժանելի. դժուարին» (Թէոդ. գով., էջ 1262), դառնութիւնաբեր «դառնութիւն բերող՝ պատճառող» (Թէոդ. խչ., էջ 1251), դարապետական «դռնապանական» (ն. տ., էջ 1251), դժապան «դժնեայ» (Թէոդ. ընդ., էջ 1243)<sup>17</sup>, դժնդակաբարբառ «շարալեզու. հայհոյիչ» (ն. տ., էջ 1245), եզամիտ «միամիտ» (Թէոդ. գով., էջ 1268), եռաթուեան «եռաթիւ. երեքանձնեայ» (Թէոդ. խչ., էջ 1257), եռանդնակայծակ «ջերմաբռնկմամբ կայծակող» (Թէոդ. խչ., էջ 1254), երկավտակ «կրկնավտակ» (Թէոդ. խչ., էջ 1254), երկնալոյս «երկնային լոյսով ողորդուած» (ն. տ., էջ 1257), երկնապարծ «յոյժ պանծալի» (Թէոդ. գով., էջ 1268), երկրաբարձ «երկրից էլ վեր. օդային» (ն. տ.), երկրաբերձ «երկրից բարձրացած» (ն. տ., էջ 1259), երփնագանագեղ

<sup>17</sup> ՆՀԲ-ն բերում է բով՝ դժաբան «դժնայ»:

«երփնագեղ. զանազանագոյն» (ն. տ., էջ 1260), զանազանահաւաք «այս ու  
այն տեղից հաւաքուած՝ հաւաքող» (ն. տ., էջ 1266), զուգասողակից «զու-  
գաձայն. հարասող» (ն. տ., էջ 1248), ինքնահողաբուսակ «իւնքնին՝ հողում  
առանձին բուսնող» (ն. տ., էջ 1258), իսկապատում «ճշտապատում» (Թէոդ.  
ընդ., էջ 1248), լուսաշահայեղ «լուսավառ. լուսացնցող» (ն. տ., էջ 1267),  
խազմական «պատերազմող. խռովայոյզ» (Թէոդ. խչ., էջ 1253), խաղաղա-  
շարժ «խաղաղ շարժմամբ» (Թէոդ. գով., էջ 1261), խաւարաբորբոք  
«մթնդած» (Թէոդ. խչ., էջ 1255), խաւարամոլ «մոլթուլոյս. աղջամղջին» (ն.  
տ., էջ 1251), խոյրապսակազարդ «խոյրն իբրեւ պսակ առած» (Թէոդ. գով.,  
էջ 1267), խորհրդայեղ «խորհրդով լեցուն» (ն. տ., էջ 1259), խուժախումբ  
«վայրիվերոյ ազգերով լի» (Թէոդ. խչ., էջ 1255), խրքնագգեստ «խռշորագ-  
գեստ. սեւազգգեստ» (Թէոդ. ընդ., էջ 1243), ծիրանաթոյր «ծիրանագոյն» (Թէ-  
ոդ. գով., էջ 1268), կանառանեմ «հանդիսաքայլ» (Թէոդ. խչ., էջ 1250)<sup>18</sup>, կայ-  
ծակնաբորբոք «հրաբորբոք. հրացայտ» (ն. տ., էջ 1254), կենդանասաղարթ  
«սաղարթով փարթամ՝ հարուստ» (ն. տ., էջ 1252), կիսաղաւան «ղաւա-  
նանքով թերի՝ պակաս» (Թէոդ. ընդ., էջ 1246), կողամարդ «կողածին՝ (Եւս)»  
(ն. տ., էջ 1244), հաղորդընծայ «հաղորդմամբ ընծայուած. միաբան՝ գոհա-  
ցական» (Թէոդ. խչ., էջ 1256), հնծանաշէն «իբրեւ հնձան շինուած» (Թէոդ.  
գով., էջ 1266)<sup>19</sup>, հոգեխաղաց «հոգեբուխ» (ն. տ., էջ 1260), հոգեծաւալ «հո-  
գով ասուած. հոգի տարածող» (ն. տ., էջ 1266), հոսանահողովաշարժ «յոր-  
դահոս» (ն. տ., էջ 1267), հոսանապտոյտ «յորձանքով առաջացող» (ն. տ.,  
էջ 1263), հրածնունդ «հրածին» (Թէոդ. խչ., էջ 1253), հրակայծակ «բոցա-  
կէզ. հրափայլ» (ն. տ., էջ 1255), հրաշաշափղ «գեղեցկաշափղ» (ն. տ.,  
էջ 1253), հրասրեալ «իբրեւ հուր՝ հրով սրուած» (ն. տ., էջ 1252, նաեւ 1253),  
հրատաբորբոք «հրաբորբոք» (ն. տ., էջ 1254), հրատալից «հրալից. հրով լե-  
ցուն» (ն. տ., էջ 1253), հրէականառ «հրեայ խմբի յատուկ» (Թէոդ. գով.,  
էջ 1265), հրնուղալից «հրնուղալից» (ն. տ., էջ 1264), ճառագայթատես «ճա-  
ռագայթածէս» (Թէոդ. գով., էջ 1263), ճշմարտահոս «ճշմարտիտն առաջ բե-  
րող» (ն. տ., էջ 1264), ճշմարտոռոգ «ճշմարտով ոռոգուող՝ ոռոգուած» (Թէ-  
ոդ. ընդ., էջ 1243), մահահրաման «մահուան սպառնալիքով հրամայուած»  
(ն. տ., էջ 1244), մառախղամուտ «մառախլապատ» (Թէոդ. խչ., էջ 1254)<sup>20</sup>,  
մարգարէափորձ «մարգարէներից քարոզուած» (Թէոդ. գով., էջ 1267),

<sup>18</sup> ՆՀԲ-ն գլխաբառը դնում է պարզ ա-ով, վկայութեան մէջ՝ այ երկբարբառով՝ կայնառանկմ:

<sup>19</sup> ՆՀԲ-ն՝ ձ-ով:

<sup>20</sup> ՆՀԲ-ն ունի լ-ով:

մարմնաձածուկ «(հանգուցեալի) մարմինը ծածկող՝ գերեզմանող» (Թէոդ. խչ., էջ 1251), մաքրագարդել» (Թէոդ. գով., էջ 1259, 1262), մեքագոյակ «մեր գոյին բնորոշ» (Թէոդ. ընդ., էջ 1249), մերահասակ «մեր հասակին՝ տարիքին յատուկ» (ն. տ.), մերանիւք «հողածին. մարդկային» (ն. տ.), մերաստեղծակ «մերանիւթ. մարդկային» (ն. տ., էջ 1244), մերատոհմակ «մարդկային սեռին բնորոշ» (ն. տ., էջ 1249), միգավառ «միգախառն վառուած» (Թէոդ. խչ., էջ 1254), մուրագիտ «մուրալով գտած. մուրածոյ» (Թէոդ. ընդ., էջ 1243), մտացաթեւ «մտասլաց. զորեղամիտ» (ն. տ., էջ 1248), յաւակնազեղց «յանդուզն, յանդգնաբար» (ն. տ., էջ 1244), յոգներջանիկ «ըստ ամենայնի երջանիկ» (ն. տ., էջ 1247), յորդորահմար «յորդորի ձեւ գտած» (Թէոդ. գով., էջ 1267), յորդորապահանջ «թախանձագին» (ն. տ.), յորձանատոյց «յորձանքի մէջ առած՝ սուզած» (ն. տ., էջ 1261), յոքնաւիմական «բազմօրինակ» (Թէոդ. խչ., էջ 1250), նախադրուատ «երիցս գովելի՝ դրուատելի» (Թէոդ. ընդ., էջ 1247), նեղավտակ «սակաւաջուր» (Թէոդ. գով., էջ 1268), ներանմանեան «անձնաւոր, հոգեւոր» (ն. տ., էջ 1258), ներբողածանաւք «ներբողական» (ն. տ., էջ 1259), ներբողանուն «բարեհամբաւ» (Թէոդ. ընդ., էջ 1248), նոյնագոյակ «համագոյ ձեւով» (Թէոդ. խչ., էջ 1254), նորահրատ «նորովի վառուած» (Թէոդ. ընդ., էջ 1243), նորապասում «նոր պատմուած՝ պատմող» (Թէոդ. ընդ., էջ 1247), նորոգայարդար «նոր. նորոգուած» (Թէոդ. խչ., էջ 1256), նուաստաջան «խոնարհ ջանադիր» (Թէոդ. գով., էջ 1267), նպաստատու «նպաստամատոյց» (Թէոդ. ընդ., էջ 1244), շնորհադրուատ «շնորհալի. գեղեցիկ» (Թէոդ. խչ., էջ 1251), որթողոխական «ուղղափառ. ուղղադաւան» (Թէոդ. ընդ., էջ 1247), ուռթիւ «ուղիղ» (Թէոդ. խչ., էջ 1250)<sup>21</sup>, ոքոգեալ «ներս ընկած. ծածկուած» (Թէոդ. խչ., էջ 1254)<sup>22</sup>, չորեքտառեան «չորեքմատեան, քառամատեան» (Թէոդ. ընդ., էջ 1243), պասաւածարաւ «պահի մէջ ծարաւած» (Թէոդ. գով., էջ 1268), պասաւածարաւի «պահք բռնած եւ ծարաւ» (ն. տ., էջ 1267), պարկեշտունի «կոյս՝ կին պարկեշտ» (ն. տ.), ռեմակալ «ոխակալ. անիրաւ» (Թէոդ. խչ., էջ 1250), սահմանագոչ «ծայրեծայր ձայնող» (Թէոդ. գով., էջ 1261), սաղարթածաղիկ «ծաղկափթիթ. ծաղկած» (Թէոդ. գով., էջ 1251), սաղարթանեմափթիթ «դալարազուարճ» (Թէոդ. գով., էջ 1260), սղական «սուղ. պակաս» (Թէոդ. խչ.,

<sup>21</sup> Եթէ ճիշտ է կամ ընդունելի ՆՃԲ-ի բացատրութիւնը՝ «Իբր հոլովականն բառիս օրթի, ալսինքն՝ ուղիղք», ապա այն պէտք է դիտել փոխառութիւն հուն. ὀρθῶς (= ὀρθῶς) «ուղղաձիգ» բառի (հմմտ. օրթի, օրթիւ «ուղիղք» եւ այլն)։

<sup>22</sup> Իմաստի նշանակումը պայմանական է, քանի դեռ չենք պարզել բառի կազմութիւնը. ՆՃԲ-ն համարում է «բառ անտույգ», իսկ բնագրի ի խոշւ-ը դնում է ի խոշւ, որն այլ է։

էջ 1250), սովամեղ «սովի մէջ մեղաւոր» (Թէոդ. խչ., էջ 1250)<sup>23</sup>, ստեղծատեսակ «մի տեսակ ստեղծուած» (ն. տ., էջ 1253), վերաբունեալ «վերին բարձունքը բնաւորուած» (Թէոդ. գով., էջ 1262), վերջաբոսակ «վերջում՝ յետոյ եղած» (Թէոդ. ընդ., էջ 1246), վերջապարուկ «վերջամուտ. վերջում յայտնուած» (ն. տ., էջ 1245), վիժածական «վիժանուտ, հոսանուտ» (Թէոդ. խչ., էջ 1254), տառագծական «գրաւոր. գրով դրոշմուած» (ն. տ., էջ 1257), տաւածասփիւտ «ընդարձակածաւալ» (Թէոդ. գով., էջ 1267), տգիտախողխող «միամիտներին մոլորեցնող» (Թէոդ. ընդ., էջ 1243), տիգաբովս «տէգի խոցումից բխող» (Թէոդ. խչ., էջ 1250), տիգահարեալ «տէգից խոցուած» (ն. տ., էջ 1252), տիեզերաբաղձ «ամենքին ցանկալի» (Թէոդ. գով., էջ 1268), տիրակարծ «իրեն տէր կարծող. սուտիշխան» (Թէոդ. ընդ., էջ 1244), տիրափառական «վայելչական. տիրոջ փառքով վայելչացած» (ն. տ., էջ 1245), ցցունազարդ «ցցուն զարդարուած» (Թէոդ. գով., էջ 1265), փառապարգեւ «իր փառքը տարածող» (ն. տ., էջ 1259, 1268), փառատրողական «փառաբանական» (ն. տ., էջ 1258), փշադածան «խիստ փշոտ. փշալից» (Թէոդ. խչ., էջ 1254), փաղցրաբեղուն «քաղցրաբեր. քաղցր պտղած» (Թէոդ. գով., էջ 1267), փմնաբան «շողորթ» (Թէոդ. ընդ., էջ 1243), փրոնաբեր «քրտինք առաջ բերող» (Թէոդ. խչ., էջ 1256):

գ) Բայեր. ահաբռնիլ «վախից՝ սարսափից քրտնել» (Թէոդ. ընդ., էջ 1247), առատաբերիմ «բխել. առատօրէն հոսել» (Թէոդ. գով., էջ 1260), արտազանցեմ «պատուիրանազանց լինել» (Թէոդ. ընդ., էջ 1245), արտամերկանալ «բացուել» (ն. տ., էջ 1244, Թէոդ. խչ., 1250), բարեձեւազարդեալ «բարեձեւ օրինակով զարդարուած» (Թէոդ. գով., էջ 1266), բարեստեղծողն (Աստուած) «բարու արարիչ Աստուած» (Թէոդ. ընդ., էջ 1244, նաեւ 1246)<sup>24</sup>, բացաջնջիլ «հեռացնել» (Թէոդ. գով., էջ 1262), բուրաստանեալ «բուրաստանի պէս ծաղկած» (ն. տ., էջ 1260, 1267), գեղածփիմ «գեղեցկօրէն ծածանուել» (ն. տ., էջ 1261), գեղանեմեմ «գեղեցկօրէն քայլել» (ն. տ., էջ 1261), գեղեցկազարդել «գեղեցիկ զարդարել» (ն. տ., էջ 1260), զլխափառիմ «պսակ կրել՝ ըստ պատուի» (Թէոդ. ընդ., էջ 1248), դիասնունդ լինել «ծծկեր լինել» (ն. տ., էջ 1245), ընտրաբանել (< ընտրաբանեալ) «դրուատել. գովաբանել» (Թէոդ. գով., էջ 1267), թիկնադրեմ «արհամարհել» (Թէոդ. ընդ., էջ 1244), խաղաղագործեմ «խաղաղ դարձնել. հաշտութիւն հաստատել» (Թէոդ. խչ., էջ 1252), խոխումել (< խոխումեալ) «ոռոգել» (Թէոդ.

<sup>23</sup> ՆՀԲ-ն ունի նշում՝ «Եթէ չիցէ գգրելի Սովամեղ»:

<sup>24</sup> ՆՀԲ-ն՝ բարեստեղծողն Աստուած. հմմտ. «Աստուած, որ արար զամենայն ինչ բարի»:

գով., էջ 1267)<sup>25</sup>, կատարաշինեմ «աւարտել կառուցելը» (ն. տ., էջ 1259), կարատաբերիմ «կարօտ զգալ» (ն. տ., էջ 1268), հողաստեղծեալ «հողածին. հողեղէն» (ն. տ., էջ 1260), հառագայթանալ «լուսաւորուել» (ն. տ., էջ 1260), մակագարթուցանել «արթնացնել. վեր հանել» (ն. տ., էջ 1264), մակաշառաւիղել «վերընծիւղել» (ն. տ., էջ 1265), մաքրագարդել» (ն. տ., էջ 1259, 1262), յարաբղխեմ (< յարաբղխեցեր) «միշտ բխել՝ հոսել» (ն. տ., էջ 1266), ներբաժանել «հր մէջ զանազանել» (ն. տ., էջ 1265), ներծածկիլ «ներառել» (Թէոդ. խչ., էջ 1251), ներծաւալել «ծաւալել» (Թէոդ. գով., էջ 1267), ներմիանալ «միանալ» (Թէոդ. խչ., էջ 1251), ներտաղաւարիմ «բնակուել. ներառուել» (Թէոդ. ընդ., էջ 1244, Թէոդ. խչ., էջ 1254), նուագաւորել (< նուագաւորեալ) «բաժակով մատուցել» (Թէոդ. գով., էջ 1266), պայծառաբերիլ «առատ պտղաբեր լինել» (ն. տ., էջ 1266), պարունակատեղիմ «պարփակուել» (Թէոդ. ընդ., էջ 1244), ստորացաւել «վար հոսեցնել. թափել» (Թէոդ. գով., էջ 1260), ստորափայլեմ «ներքեւից վեր փայլել» (ն. տ., էջ 1261), վերանայթել «ցայտել. խայտալ» (ն. տ., էջ 1261), վերաստեղնեալ «վերստին աճած. նորաբողբոջ» (ն. տ., էջ 1267), վիժաբումիմ «քրտնելով հոսել՝ քրտնահոսել» (Թէոդ. ընդ., էջ 1247), վտականալ «վտակի վերածուել» (ն. տ., էջ 1245), տենչախիւրել «տենչալ. փափագել» (Թէոդ. գով., էջ 1268), փայլագունել «փայլատակել» (Թէոդ. գով., էջ 1260), փայլածագեմ «լուսափայլել. ծագել» (ն. տ., էջ 1264):

դ) Մակրայներ. անյեղաւրէն «անյեղ, անյեղլի» (Թէոդ. խչ., էջ 1251), անտղաբար «անբաժանաբար» (ն. տ., էջ 1252), բագձաձաբար «առհասարակ» (ն. տ., էջ 1251), յոֆնուտ «վաղուց» (ն. տ., էջ 1255)<sup>26</sup>, շահատակաբար «շահատակօրէն» (Թէոդ. գով., էջ 1264), շահեկանաբար «շահեկանօրէն» (ն. տ., էջ 1261):

Յետագայ շարադրանքում, նիւթի ամբողջացման համար, անդրադառնում ենք նաեւ մի քանի խումբ այնպիսի բառերի, որոնք ՆՀԲ-ում հանդիպում են Քռթենաւորի եւ այլ հեղինակների երկերից քաղուած օրինակների վկայաբերմամբ:

Յ. ՆՀԲ-ն ունի, նախ՝ Քռթենաւորի, այնուհետեւ՝ յետագայ հեղինակների օրինակով. աղեղնաբանել «սխալ ուղղութեամբ խօսել» (Թէոդ. ընդ., էջ 1244), անթանալի «անթաց. անջրդի» (Թէոդ. գով., էջ 1267), անտղելի «անբաժանելի» (Թէոդ. խչ., էջ 1250, 1251), աստուածաներկ «սրբագոյն.

<sup>25</sup> ՆՀԲ-ն ունի խոխումեմ.

<sup>26</sup> ՆՀԲ-ն՝ գ-ով, բնագրում՝ Բ-ով:

սրբութեամբ թաթախուած» (Թէոդ. խչ., էջ 1253), բազմահոլով «շատ՝ մեծ պտոյտ ունեցող» (Թէոդ. գով., էջ 1261), բաժամիտ «փոփոխամիտ» (Թէոդ. խչ., էջ 1255), բաղարկեմ «ի մի բերել» (Թէոդ. խչ., էջ 1250), բարիատեաց «վատաբան, չարափառ» (ն. տ., էջ 1250), գինեբուլիս «գինեբեր» (Թէոդ. գով., էջ 1265), դուարենի «ոչխարենի, արջառենի (հագնելիք)» (Թէոդ. ընդ., էջ 1243), երկնակառոյց «երկնքում կառուցուած՝ հաստատուած» (ն. տ., էջ 1243, նաեւ Թէոդ. խչ., էջ 1252), ծարաւական «ծարաւ» (Թէոդ. ընդ., էջ 1245), ծովաֆատակ «ծովանման» (Թէոդ. գով., էջ 1262), հեզահարցումն «մեղմ հարցուփորձ. քաղցր ատեան» (Թէոդ. ընդ., էջ 1244), հրաշագնապէս «հրաշալիօրէն» (ն. տ., էջ 1267)<sup>27</sup>, ձիւրել «ձրի տալ՝ պարգեւել» (Թէոդ. խչ., էջ 1250), մեռումական «ըստ մեր կերպի եւ բնոյթի» (Թէոդ. ընդ., էջ 1249), յարահիւսեալ (< յարահիւսեմ) «բաղհիւսել, շաղկապել» (Թէոդ. խչ., էջ 1251), յաւտուղէշ «մշտադալար» (ն. տ., էջ 1244), յորդահոսակ «յորդահոս» (ն. տ., էջ 1248), ներպարումակել «ամփոփել. ներառել» (Թէոդ. խչ., էջ 1253)<sup>28</sup>, նմանունակ «նոյն, նոյնպիսի» (Թէոդ. ընդ., էջ 1245), շուշմաբեր «շուշան առաջ բերող» (Թէոդ. գով., էջ 1265), պատուիրանադրեմ «օրինադրել» (Թէոդ. ընդ., էջ 1244), սաղարթապատ «սաղարթով պատուել» (ն. տ., էջ 1244), վերահայեաց «բարձր տեսնելու ձգտող» (Թէոդ. գով., էջ 1260), վտակահոս «իբրեւ վտակ հոսած» (Թէոդ. խչ., էջ 1253), տիրապատնառեալ (< տիրապատնառել) «տիրոջ առաջ պատճառ բռնել» (Թէոդ. ընդ., էջ 1244)<sup>29</sup>, ֆատակութիւն «նմանութիւն» (ն. տ., էջ 1252):

4. ՆՀԲ-ն բերում է Քոթենաւորին ժամանակակից կամ յետագայ հեղինակների հետ նաեւ Քոթենաւորին. անդրլակի «անդուլ» (Թէոդ. ընդ., էջ 1246)<sup>30</sup>, գեղազարդեմ (< գեղազարդեալ) «պաճուճել. պճնել» (Թէոդ. գով., էջ 1268), լուսաթռիշ «լուսեղէն թեւով թռչող. հրեշտակային» (Թէոդ. խչ., էջ 1251), յարահիւսեմ (< յարահիւսեալ) «շաղկապել» (ն. տ., էջ 1252, 1255), տղայերամ «տղաների խումբ» (Թէոդ. խչ., էջ 1256):

<sup>27</sup> ՆՀԲ-ն ունի երկրորդ վկայութիւն՝ Հ. կիլիկ. ( = ?), որ չի բացւում համառոտագրութիւնների ցանկում:

<sup>28</sup> ՆՀԲ-ն երկրորդ վկայութիւն է բերում Շ. տաղ. վրդվո. [= Շնորհալի, Տաղ վարդավառի (?)], որ չի նշում համառոտագրութիւնների ցանկում:

<sup>29</sup> ՆՀԲ-ն այս բառի բնագրային նոյն օրինակի համար նշում է նաեւ՝ «յորմէ Գնձ» [= «Հաւաքումն եկեղեցական երգոց՝ որք Գանձք կամ Քարոզք կոչին». իմա՝ հետագայի, Ժ. դ.]:

<sup>30</sup> ՆՀԲ-ն ունի առանց Ը-ի, այլ վկայութիւն՝ Յիշ. ռսկ. յն., որ չի նշում համառոտագրութիւնների ցանկում:

5. ՆՀԲ-ն ունի, նախ՝ ուշ հեղինակ(ներ)ից, ապա՝ Քոթենատրից վկայություն, քէն հակառակը պիտի լինէր: Սա, թերեւ, կարող է պայմանաւորուած լինել բառի՝ առաջնային (կամ երկրորդային) իմաստով գործածութեամբ, արտափչեմ «արտաշնչել» (Թէոդ. ընդ., էջ 1246), բազմայորդոր «բարեյօժար» (Թէոդ. գով., էջ 1268), բարեգործել «գթասիրեալ, գորովալից եղած» (Թէոդ. ընդ., էջ 1244), դատապարտական «դատապարտելի» (ն. տ., էջ 1246), երախտագործել «լաւութիւն անել» (ն. տ., էջ 1245), խաւարաբորբոք «աղօտ. ստուերամած» (Թէոդ. խչ., էջ 1255), խնդամտաբար «խնդամիտ. զուարթագին» (Թէոդ. գով., էջ 1264, 1265, 1268), հնապատմութիւն «հին պատմութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1247), նախասացութիւն «կանխասացութիւն» (ն. տ., էջ 1246), նկարակերպութիւն «նկարագրութիւն» (Թէոդ. գով., էջ 1266), հոգեկար «նկարուած հոգով. «ի հոգւոյն սրբոյ» (Թէոդ. գով., էջ 1266)<sup>31</sup>, հոգիանիւթ «հոգու՝ հոգեկան նիւթ» (ն. տ., էջ 1266), շարաւանդն «կապ, շղթայ» (ն. տ., էջ 1265), շնորհագարդեմ (< շնորհագարդեալ) «շնորհով զարդարել՝ ճոխ դարձնել» (ն. տ., էջ 1266), որցեալ «թոցնել» (Թէոդ. խչ., էջ 1250), վերակենցաղիլ «յառնել մեռածներից, համբառնալ» (Թէոդ. ընդ., էջ 1246, նաեւ խչ., 1251), վերայայտել «բացայայտել. յայտնել» (Թէոդ. ընդ., էջ 1244), վիմակառոյց «քարաշէն» (Թէոդ. գով., էջ 1268), տարացուցաբանութիւն «օրինակով բացատրութիւն» (Թէոդ. ընդ., էջ 1247), փոխագործութիւն «ընդօրինակում. նոյնպիսին անելը» (Թէոդ. ընդ., էջ 1246) եւ այլն:

6. ՆՀԲ-ն ունի այլ, ընդ որում՝ յետագայ հեղինակ(ներ)ից, բայց ոչ Քոթենատրից վկայութիւն, անիծադրութիւն «անիծելը» (Թէոդ. ընդ., էջ 1244, նաեւ 1256), անփատակ «աննման. անհարազատ» (Թէոդ. խչ., էջ 1251), արուեստահնարագործութիւն «գեղեցկօրէն հնարուած լինելը» (Թէոդ. ընդ., էջ 1258—1259), արփիահրաշ «լուսաճաճանչ» (ն. տ., էջ 1251), գեղազանակ «գեղեցիկ, պայծառ, վայելուչ» (Թէոդ. գով., էջ 1260), դիագունդ «դեւերի խումբ» (ն. տ., էջ 1268), լուսայեղց «լուսալիր» (ն. տ., էջ 1267)<sup>32</sup>, թփատեսակ «թփի նման» (Թէոդ. խչ., էջ 1254), հարկապահանջութիւն «հարկերի պահանջելը» (Թէոդ. գով., էջ 1267), հրաշատեսիլ «չտեսնուած. հրաշագեղ» (Թէոդ. խչ., էջ 1253), ներմագոյն «ներքին» (ն. տ., էջ 1251), ջահափայլեալ (< ջահափայլել) «լուսափայլ» (ն. տ., էջ 1253), տարրալուծեալ «տրոհուած. հեռացուած» (Թէոդ. խչ., էջ 1251), ֆանակաւոր «չափաւոր. չափելի» (ն. տ., էջ 1254):

<sup>31</sup> ՆՀԲ-ն ունի ե-ով:

<sup>32</sup> ՆՀԲ-ն ունի Անան. եկեղ. ձ-ով՝ լուսայեղծ, նաեւ՝ լուսահեղծ, վերջինս առանց վկայութեան:

7. ՆՀԲ-ն ունի, ի թիւս այլ (կամ նախորդ) հեղինակների, նաեւ Քորթենաւորից վկայութիւն. ապարասանաբար «անվայել՝ սանձարձակ ձեւով» (Թէոդ. ընդ., էջ 1244), կամակարեմ (< կամակարաւղ) «կարողանալ» (Թէոդ. ընդ., էջ 1243) եւ այլն<sup>33</sup>:

## РЕЗЮМЕ

Седьмой век армянской духовной и церковной жизни породил нам многих известных деятелей, благодаря которым их эпоха была названа жемчужиной на короне армянской истории. Они представляли целую плеяду. Среди них был и Теодорос Кртенавор – церковный деятель со знаменитой родословной, учитель. Его церковно-богословские труды – ценный вклад в истории армянской словесности и лексики.

Язык сочинений Теодора Кртенавора (VII в.) до сих пор не был предметом отдельного лингвистического исследования. Лишь малая часть неологизмов его сочинений вошла в новые словари древнеармянского языка. А его церковно-литературному наследию, можно сказать, было обращено внимание только в круге вопросов теологических дискуссий и прилегающих вопросов истории Армянской Церкви. Однако язык и, в частности, лексика сочинений этого самобытного духовного мыслителя и учителя двух католикосов Армянской Церкви, имеет важное значение для изучения истории древнеармянского языка в целом.

В статье дается лексикологический анализ тех слов, которые либо не даются в «Новом армянском словаре» (тт. 1-2, Венеция, 1836-1837 гг.), т. е. с оговоркой являются неологизмами своего времени, либо были отмечены с трудами других авторов разных времен.

Лексические неологизмы иногда образованы фантастическими способами словообразования (многокомпонентным образованием сложного или суффиксального слова) армянского языка, что говорит о своеобразном мышлении и словотворчестве автора. И тем самым лексика Теодора Кртенавора имеет немаловажное значение для нового исследования истории армянского языка.

<sup>33</sup> Նկատելի են նաեւ բառերի նոր իմաստային կիրառութեան օրինակներ, որոնց ալյատեղ չենք անդրադառնում. հմմտ. անգիտակ «անտեղեակ» (ոչ թէ՛ «տգէտ») (Թէոդ. ընդ., էջ 1244), անընկալ «անընդունակ. անկցորդ» (ոչ թէ՛ «չընկալուած. անընդունելի») (Թէոդ. ընդ., էջ 1246), անփալ (լինիմ) «խստասիրտ, անողորբելի» (ոչ թէ՛ «անփապար») (Թէոդ. ընդ., էջ 1248), գանգուր(f) (< գանգրիւֆ) «(գետի) ալիք(ներ)» [ոչ թէ՛ «(ոլորուած) գանգուր(ները)»] (Թէոդ. ընդ., էջ 1261) եւ այլն:

## SUMMARY

The seventh century of the Armenian spiritual and ecclesiastical life produced many famous people, thanks to whom their epoch was named as the crown pearl of the Armenian history. They represented a whole galaxy: one of them is Theodoros Krtenavor of noble origin, teacher of the pious. His ecclesiastical and theological works contribute valuably to the history of the Armenian lexicology.

The language of Theodoros Krtenavor's works (7<sup>th</sup> century) has not yet undergone a separate linguistic study; only a small part of the neologisms of his works has been included in the new dictionaries of the Classical Armenian language. And one can say that his ecclesiastical-literary heritage has been noticed only in the context of theological discussions and issues concerning the history of the Armenian Church. However, the language, in particular the vocabulary of the works of this self-sufficient spiritual thinker, teacher of two Catholicoi of the Armenian Church, is of great importance in studying the history of the Classical Armenian language as a whole.

In the article, we present a lexicological analysis of those words, which are either not found in the "New Armenian Dictionary" (vols. 1–2, Venice, 1836–1837), that is they are conditionally, with reservation, considered to be neologisms of their time, or have been noted through works of other authors of different times.

Lexical neologisms are sometimes shaped, so to speak, in fantastic ways of word formation (i.e. multi-component formation of a complex or suffixed word) of the Armenian language, which testifies to the author's original thinking and word-making. And thus, the vocabulary of Theodoros Krtenavor as a whole is of great importance in studying anew the history of the Armenian language.

